

նեմ. Թող վայելեմ այն յետին ուրախութիւնն ալ, որ մայր մը կը զգայ, երբ իր որդին մանկութեան հասակէն ելլելով ալ ազատ կ'ըլլայ: Անդ, քիչ ատենէն ալ իմն պիտի չըլլաս. քու կիրքերդ, յօժարութիւնդ և թերեւս ուրիշ կին մը քեզի ընկեր պիտի ըլլան... Շնորհէ ինծի իշխանութեանս այս յետին վայրկեանները, և քու ծնողիդ քաղցր բռնաւորութեանը դէմ մի աւրտամբիր: Այսօր դեռ զքեզ գրկացս մէջ կ'որորեմ, վաղը կատարեալ մարդ մը պիտի ըլլաս, և ես կէս մայր պիտի ըլլամ, որովհետեւ ալ չկարենամ պիտի զքեզ պաշտպանել:

Վորվա այս խօսքերս այնպիսի տխուր և քաղցր ձայնով մը ըսաւ, որ Վրվինտի սիրտը ելլելով զինքը գրկացը մէջ գգուեց, խանդակաթ անուններ տալով, և խոստանալով որ մտադիր իրեն կամայցը հպատակի:

Կը շարունակուի:

Խոալիա:

Լեռնաւոր աշխարհագրական փետուրէն: — Լեռնաւոր գրախոսն, Խոալիա, հիւսիսէն դէպ 'ի հարաւ ձգուած թերակղզի մըն է՝ ընդ մէջ 46° 40' և 36° 40' հիւս. լայն. և 3° 20' ու 16° 10' արեւելեան երկայնութեան: Սիկիլիոյ հարաւային ծայրէն մինչև 'ի հիւսիս, Լոմպարտիա և Վենետիկ, 1,200 հազարամէդր է, և հռոմէական գետէն մինչև Իզոնցոյ 560 հազարամէդր. ընդհանուր տարածութիւն է 278,000 քառ. հազարամէդր՝ որուն 43,830 քառ. հազարամէդրը կղզիք են: Հիւսիսէն Վլպեան լեռները պատուար են Խոալիոյ՝ որոնցմով հելուետիայէն և Վիրտէն կը բաժնուի. արեւմուտքէն Վադզիա, հռոմէական, Վար, Վլպեայց մէկ թեւ և Սիլերկրականը զինքը կը շրջապատեն. արեւելքէն Վերիական ծովն, հանդերձ իր կղզիներովն ու նեղուցներովը, իսկ մեծատարած ու վիթխարի Վլպեանը

գօտուոյ մը պէս Խոալիոյ բնական սահմանը կը ձևացընեն 1,040 քառ. հազարամէդր տարածութիւն. և թէպէտ, ըստ իրենց բնական զրիցը խորհրդածելով, պէտք էին զԽոալիա անդորրացընել որ և իցէ օտարազգի արշաւանքներէ, բայց ընդհանուրապէս աւելի գրգռ մը եղած են զինքը անհանգիստ ընելու, իրենց հիւսիսային կողմը տափարակ ըլլալուն պատճառաւ, որով թշնամեաց համար ամուր ասպատանութեան միշտ եղած են և դիւրագնալի ճանապարհ. նոյն կողմի բերրի և ընդարձակ դաշտերն ալ հին ժամանակներէ 'ի վեր ճակատամարտներու հանդիսարան մը եղած են Լարոպական ազանց՝ որոնց ճիգն էր զգեղեցիկն Խոալիա իրենց աւար առնուլ: Վլպեանց հետ կը միանան Սալոնիոյ մօտ և Վլպենեանք, որ Խոալական թերակղզին միջնաշխարհէն կը կտրեն և կ'երկրնան մինչև հարաւային Խոալիոյ ծայրերը և մինչև



Տեսիլ Ապենեան ի Կալաբրիա.

'ի Սիկիլիա: Հիւսիսային և հարաւային Խոալիա բոլորովին տարբեր երևոյթ մը ունին մէկմէկէ՝ թէ ըստ ժողովրդոց, թէ ըստ կլիմային և թէ ըստ արգասանդութեան դաշտաց և այգեստանեայց. Վլպեան և Վլպենեան լեռանց միջակայքը մեծաւ մասամբ դաշտային երկիր է, իր ամենայն բարութիւնը հանդերձ բազմաթիւ և ոլորտապատոյտ ջրաբեր գետերով, ինչպէս Բոյ՝ ըստ նախնեաց Պադուս կամ Լարիդանոս՝ հըզօր և առաջին է Խոալիոյ մէջ, Սիլերա, Պորմիտա, Վրէպալիա, Վարոյ,

Տուառ, Վիշինոյ, () լոնա, Լտտա, () լիոյ, Սէլլա և Սինչիոյ . Բոյ գետին հետ կը միանան Լտիճէ, Պրէնգա, Բիալէ, Վալիամէնգոյ և միախուռն կը թափին Երզրիական ծով : Եւսե բազմութիւն լճերու և ջրադարձներ կ'ուռգեն վերին Խտալիոյ դաշտերը, որոնց մէջ համբաւաւոր են իրենց բնական դրից գեղեցկութեամբ՝ լիճն Սէժ, Կարտայ և Վոմոյի : Բնդհանրապէս այս կողմի շրջակայ երկիրները ատենօք ջրով ողողած ըլլալուն՝ վերջի աստիճանի բարեբեր են, միայն ստէպ պատահած գետերու զեղմունքը շատ փնաս կը բերեն երկրին : Եւսեան լեռները ընդհակառակն, որ ինչպէս ըսինք, ամբողջ հարաւային Խտալիա ըստ երկայնութեան երկու կը կտրեն, կ'արգելուն գետոյ տարածմունքը՝ որով համառօտ ընթացքով մը ծով կը թափին և շատը հեղեղաբար արշաւելուն նուազ կամ գրեթէ ամենեւին օգուտ մը չունին երկրին բուսաբերութեանը . գլխաւոր լճերը՝ Բերուճիա, Պոլսենա, Պրաչչիանոյ և Վոլչինոյ՝ լեռանցամէջ մեծաւ մեծ վհեր են՝ և անձրեաց յորդութեան ժամանակ սաստիկ ողողմունքներ կը պատճառեն մերձակայ դաշտաց և աւաններու : Երկրին բնական կազմութիւնը ընդհանրապէս հրաբխային է՝ և մասնաւորապէս հարաւային մասին մէջ ստէպ կ'ըլլան ահաւոր երկրաշարժ.



Կատար Ետնայ .

ներ՝ որոնց գլխաւոր հնոցներն են Սէսուվ, Ետնա և Սղրոմպոլի որք միշտ կը ծխան հանապազ մերձաւոր ճայթմունք մը սպառնալով :

Խտալիոյ բաժանմունքը կարծես թէ բնական դիրքով որոշուած է, վասն զի Եւսեան լեռանց զանազան գօտինները, որ մէյմէկ զօրաւոր պարիսպներ կը ձևացնեն՝ հզօր ապաստանարանք եղած են անոնց մէջ ապաստանելոց, և փոքրիկ ժողովուրդներ անկախ իշխաններու տակ կառավարուելով դիւրաւ կը ծագէին գժտութիւններ և պատերազմներ՝ որով և զօրութեան միութիւնը ջլատելով օտարաց սրոյն տակ անաշխատ կ'ընկճուէին : Հռովմ՝ հինգ դար շարունակ կռուելով հազիւ կրցաւ Խտալիոյ միութիւնը կազմել և նոյն մեծազօր կայսրութեան անկմանէն մինչև մեր օրերը այս վիճակին մէջն է :

Սիմայ և Բերս : — Բարեբեր է Խտալիա և օդը քաղցրաշունչ՝ թէպէտ և ամէն տեղ միօրինակ չըլլայ, և ոչ ալ այնպէս անորոշելի որչափ որ կը նկարագրուի . հիւսիսային կողմը և միջնաշխարհը քան զայլ ամէն գաւառ աւելի բարեխառն է և քաջառողջ . իսկ հարաւային մասը աւելի Եփրիկէի երեւոյթն ունի քան թէ Եւրոպիոյ . և թէպէտ կլիման 'ի հասարակի կենսաւէտ է, բայց ամառուան սաստիկ հրակէզ ջերմութիւնը կարգէ դուրս ցամաքութիւն մը կը բերէ երկրին՝ բոյսերը ու ջրոյ ամբարանոցները ցամքեցնելով . աւելի փնասակար և անտանելի է հարաւաշունչ խոնաւ քամին (շերտֆոյ) որ Եփրիկէի խորշակ ըսուածն է . Սիկիլիոյ և Եփապօլոյ ստորին մասը ձմեռ ամենեւին չունի, միայն ցած ու խոնարհազօյն տեղերը սաստիկ ու առատ կ'անձրեւէ՝ բայց երկրին բուսաբերութեանը փնաս մը չբերեր : — Խտալիոյ պէս արգաւանդ երկիր մը թէպէտ առաջինը պէտք էր ըլլար Եւրոպիոյ մէջ մշակութեան կողմանէ՝ բայց Վալլիա, Պելճիա և Բնգղիա զինքը կ'անցնին . ուստի այս կողմանէ չորրորդ աշխարհքն է, թէպէտ և առաջին իր բարեբերութեամբ : Խտալիոյ դաշտերը աւելի բնութիւնը կը հողայ քան թէ մարդիկ . եթէ վերոյիշեալ աշխարհքներուն նման Խտալացիք ալ բերոց կա-

բօտուածիւն քաշելու ըլլային՝ տարակոյս չկայ որ իրենց հանձարովը ուրիշներէն վար չէին մնար : Ի վերայ այսր ամենայնի հարուստ է Խտալիա իր բերքերովն և մասնաւորապէս ցորենով , մարաքորենով և որիզով որ հարաւային խոնաւ գաւառներուն մէջ առատութեամբ առաջ կու գայ . որ(թոյ մշակութիւնը (թէպէտ Վաղղիոյ չափ զարգացած չէ , սակայն ունի Խտալիա ալ աղնիւ գինիներ , ինչպէս են Սմոդէ Ֆիասզոյի , Լէւադի-գոյ , Սմոդէ Բուլխանոյի և Լըտա-տուք Վրիտտուի ըսուածները , որ Լը-րոսիոյ համբաւաւոր գինեաց կարգէն են . ձիթենին իր առատութեամբ մեծ շահ կը բերէ երկրին , և ընտիր է Լուգգայի և Վենուայի ձէթը , մանաւանդ առաջինին , զոր շիշերով հեռու աշխարհքներ կը խաւրեն : Իսկ այն գաւառները ուր ձիթենի և այգի լաւ չեն մշակուիր՝ իրենց առատութեամբ կը փոխանակեն շագանակ , ընկոյզ ու կաղին . հարաւային կողմերը բացօթեայ առաջ կու գան նուռն , կիտրոն և նաւրինջ , արմաւենի , քոքոյ և եղեգն շաքարի , կապար , եղջիւր ախորժա-համ և դրի-Ք աղնիւ . դարձեալ բաւ-բակ , ջերմին կլիմաներու զանազան տե-տակ ծառեր ու բոյսեր , ծխախոտ , վուշ , առատ ընդեղէնք , միով բանիւ ոչ երբէք Խտալիա ուրիշ երկիրներու բերքերուն կը կարօտի , մանաւանդ (թէ իրեն լիովին բաւեցնելէն ետքը մաս մ' ալ օտարայ կը մատակարարէ :

Ինտանի անասնոց կողմանէ ալ ճոխ է Խտալիա , և շատ խնամքով կը դար-մանեն մանաւանդ հիւսիսաբնակ Ժուղովուրդները , ուր կը մուցանեն նաև շերամի որդը և աղնիւ է Լումպարտիոյ մետաքսը՝ բայց ստորին քան զՎալանիոյ . հարաւային գաւառները կը գտնուին վայրի ցուլ զոր լծելու կը վարժեցնեն . իսկ լեռնային և քարուտ կողմերը առ հասարակ փոխանակ ձիու՝ էշ և ջորի կը դործածեն . հելուետական Լէ-պեանց մօտերը կան նաև աղգ աղգ ե-րէոց . բոլոր Խտալիա լի են արջառոց և ոչխարաց խումբեր և ասրագեղ գա-

ւինք , որ ինչպէս 'ի Վալանիա՝ լերանց և դաշտաց վրայ կ'արածին . կը գտնուի նաև այծեամն և օձ (թունաւոր , և մա-նաւանդ ֆնասիչ միջատներ որ շատ կը յաճախեն ջերմ գաւառներու տակ՝ ինչպէս կարիճ՝ և Վարանդոլա ըսուած սարդը՝ որուն իրաժուածքը մահաբեր է եթէ փութով դարման չըլլուի : Եր-պէս ծովերէն առատ ձուկ կ'ելլէ , ըն-տիր է նաև ոստրէն , ծովեղերեայ ա-պառաժուտներէն կ'ելլէ աղնիւ բուստ , մասնաւորապէս Սեսսինայի նեղուցէն՝ ընդ մէջ Սիկիլիոյ և Լէպոստոյ :

Հանք քիչ ունի և մի միայն նշանա-ւորն է Լապա կղզւոյն երկաթահանքը ուր անսպառ ամբարներ կան . սպիտակ և կճեայ մարմարին՝ որ հիմա շատ նուազած է . հրաբխից սահմանները առատ է լաւա՝ որ չորնալէն ետքը քարի տեղ կը դործածուի և աւելի կարծր է . դարձեալ հանքային ջերմուկներու ջու-րեր՝ և նշանաւոր է Բէգուարոյի ջուրը որ շատ հիւանդութեանց օգտակար է . կոյ նաև ծծումբ և Բուրյոլանա ըսուած տեսակ մը հողաքար :

Պարտաւիտն և վաճառականութիւն : — Խտալիա միջին դարուն ատենները իր ձեռակերտից ճարտարութեամբն ու ամէն տեղ տարածեալ վաճառականու-թեամբը առաջին էր Եւրոպա , բայց հիմա շատերէն աւելի ստորին է , և կը պակսի այն արթուն ու գործօնեայ աշ-խոյժը որ այսօրուան օրս Վաղղիոյ , Լնգղիոյ և Իտացեալ նահանգաց ոգին է : Եւս մասիս մէջ յառաջագէմ են Եւտալիա՝ Սարդենիա և Լումպարտիա , ուր մեծ խնամք կ'ըլլուի ձեռագործաց զարգացմանը , և յիրս իրս վերոյիշեալ մեծ աղգաց կը հաւասարին : Եւ-վային վաճառականութիւնը նմանա-պէս շատ ինկած է համեմատութեամբ միջին դարու որ տէր էին բովանդակ ծովուց . արդի վաճառաշահ գլխաւոր նաւահանգիստներն են Վենուա , Լի-վոռնոյ , Սենետիկ , Լնգոնա , Լէա-լոլիս , Տարենտոն , Բէճճիոյ , Բալեր-մոյ և Սեսսինա , իսկ ցամաքային շա-հաստան քաղաքներն՝ Վուրին , Լըեք-



Ս. Բեռնարդոսի լեռը .

Սանդրիա , Սիլան , Սերոնա , Փլորենտիա , Սուգա , Սոտենա , Բարմա , Պոլոնեա և Հոլովա :

Վիսաուր վաճառքներն են Սենտկոյ , Սիլանու և Ղուրինի կերպասը . Փլորենտիոյ , Սիցցայի և Սեպուրոյ չուխան և բարկ հեղանիւթները , Պրէշիայի երկաթեղէն անօթներն ու զէնքերը , Սիլանու ժամացոյցը , Սոտենայի և Ղուրինի տեսաբանութեան գործիքները , Փլորենտիոյ յախճապակին , Դարրարայի կճեպ անօթները , Գրեմոնայի ջութակները և Հոլովայ Սիւսիոնը : Բայց գեղեցիկ արուեստները միշտ և ամէն ատեն խաղիոյ սեպահական պարծանքն եղած են և ոչ ոք կրցաւ կորզել իրենցմէ այս առաջնութեան պատիւը՝ մանաւանդ թէ և ոչ իսկ կրցան հաւասարիլ այն աննման և

բարձր հանճարներուն որոնցմով կը փառաբորուի Խալիա . բաւական է միայն յիշել Սափայէլ մը , Սիբէլ-Նիճելոյ մը , Ղիցիանոս մը , Վանսովա մը , որոնց գէմ չկրցան օտարազգիք ակոյցեան մը հանել :

Ճանապարհ . Զրանդ . Երկաթուղի . — Եւս դարուս սկիզբը շինուած ճամբաները բոլորն ալ աննման են գեղեցկութեամբ և դիւրութեամբ , և մեծաւ մասամբ Սեծին Վաբուէնի շինութիւնքն են . նշանաւոր են Սեմբրոնի , Ս . Բեռնարդոսի , Սիլուէնի , Ս . Վոդարտեայ և Սոն-Զենիզիոյի լեռան ուղիները . այս յետինս 1805^ն լաւագոյն ևս յարգարեց Վաբուէն , ուր կայ նաև միանձանց վանք մը որ ճանապարհորդները ձրի կը կերակրեն . հոն է նաև Սանդուխը կամ Նիճաւ ըսուած

ուղին որ Շամպերիի վրայէն Վաղ-
ղիա կ'ինջեցնէ : 'Եւապօլսոյ մէջ ա-
նուանի է Լալաբերիոյ ուղին , ամբողջ
հարաւային երկայնութիւն վրայ . հռով-
մայեցւոյ ճամբան որ մինչև 'ի Պրին-
գէս կ'երթայ : 'Եւոր շինուածներուն
մէջ անուանի են ' Վուրինէն Վենուա ,
և Վենուայէն Լիվոնոյ տանող ճամ-
բաները . դարձեալ ընդ մէջ Վենուայ
և 'Լիցցայ և ընդ մէջ Լիվոնոյ և Լրոս-
սէգոյ ձգուած շաւիղները :

'Եւապօլսոյ ջրանցք բազմաթիւ են
Խաւիւի մէջ՝ բայց մեծաւ մասամբ հը-
նոց շինութիւնք են . ասոնցմէ շատը
Լոմպարտիոյ մէջ է , ուր շատ երթեւե-
կութիւն կայ նաև շոգեշարժ նաւերու :

Հիւսիսային Խաւիւա շատ յաճախեց
այս վերջերս երկաթեայ շաւիղները .
Սարդենիոյ ուղղեաց կեդրոնն է Վու-
րին՝ ուսկից կը հաղորդուի Վենուայ
և Լիլքսանդրիոյ հետ . դարձեալ
Շամպերիէն մինչև հռոմանոս գետ
և անկէ մինչև 'ի Լիոն քաղաք Վաղ-
ղիոյ . Լոմպարտիոյ մէջ նշանաւոր է
Ֆերտինանտեան երկաթուղին , ընդ
մէջ Սիլանու և Սենետիոյ , և ան ճամ-
բան որ կը ձգուի ընդ Սենետիկ և ընդ
'Վրեստ : Սիլին Խաւիւի անուանի եր-
կաթուղիներն են 'ի Փլորենտիոյ ց'Նի-
զա ձգուածը և ց' Լիվոնոյ՝ ուսկից կ'եր-
թայ նաև 'ի Լրադոյ . կայ ուրիշ եր-
կաթուղի մ' ալ ընդ մէջ Բիզայ և
Լուգգայի : 'Եւապօլսոյ մէջ երկու եր-
կաթուղի կայ մէկը անուանի մայրա-
քաղաքէն 'ի Լոյերա ձգուած և միւսը
'ի Լապուա :

Բնակիչ և կրօն : — Բոտ յետին աշ-
խարհագրաց Խաւիւի բնակիչն է 26,
500,000 հոգի , յունալատին և գերմա-
նացի ազգաւ : Խաւիւի բնակչաց ծագ-
մանը վրայ դեռ ինչուան հիմա որոշ տե-
ղեկութիւն մը չկրցան տալ հնագէտք
և աշխարհագիրք . ոմանք կ'ըսեն թէ
'Լոյ նահապետին որդիքներէն Խաւիւա
գաղթելով սկիզբ տուած ըլլան Խաւ-
լացւոց , բայց աւելի հաւանականն է ,
և որուն բազումք յիմաստնոց կը համա-
ձայնին , թէ Վրիստոսէ 1700 տարի

առաջ Պելասգեանք Լիւիոյ կողմերէն
Խաւիւա արշաւելով՝ առաջին անգամ
հոս հաստատուած ըլլան՝ որոնց գլխա-
ւորին յաջորդներէն մէկուն անուամբը
Խաւիւս՝ աշխարհքն ալ Խաւիւա կոչուե-
ցաւ : Եւս առաջին գաղթականութե-
նէն քանի մը հարիւր տարի ետքը (3ու-
նաստանի այլ և այլ կողմերէն և փոքր
Լիւիոյ ծովեզերքներէն ուրիշ նորանոր
գաղթականութիւններ գալով Խաւ-
լիան բնակչօք լեցուցին . և աւելի հաս-
տատեցին իրենց բնակութիւնը Սիլիւ-
կրանին եզերքները , ուր ձևացան Լա-
տիոնի և Լատուրացւոց թագաւորու-
թիւնները , որոնք վերջը հռովմէական
հասարակապետութեան մէջ խառնուե-
ցան անկէ նուաճուելով : Ինչուան հը-
ռովմէական կայսրութեան անկումը Լ-
տալիա միշտ հռովմայ հպատակ մնա-
լով , անոր կործանմամբը իրեն վիճակն
ալ փոխուեցաւ . կայսրութեան տկարա-
ցած ժամանակները Լաւրոպիոյ այլ և
այլ կողմերէն բարբարոս ժողովուրդներ
Խաւիւի և հռովմայ վրայ արշաւելով
խիստ շատ տարի հարստահարեցին և
նեղեցին Խաւիւի խեղճ բնակիչները :
Եւս բարբարոսներէն Լոմպարտա-
ցիք կամ Լոմպարտացիք իրենց բնա-
կութիւնը Խաւիւի հիւսիսային կողմե-
րը հաստատեցին , և քիչ ատենի մէջ
այնպէս զօրացան որ բոլոր Խաւիւի տի-
րեցին : Բարուն Սեծն Վարոլոս յաղ-
թելով Լոմպարտացւոց իրենց երկրին
մէկ մասը հռովմայ քահանայապետաց
շնորհեց , ու ինքն ալ կայսր հռովմայ
անուանեցաւ : Բայց իրեն յաջորդացը
մէջ անմիաբանութիւններ ծագելով Լ-
տալիոյ գլխաւոր քաղաքները գլուխ քա-
լեցին և առանձինն իշխանութիւններ
ու հասարակապետութիւններ ձևացու-
ցին , որոնց գլխաւորներն էին Սիլան ,
Բաւիա , Ֆիորենցա , Բիզա , Վե-
նուա ու 'Եւապօլիս : Եւս ինքնիշխան
տէրութիւններն իրարու նախանձընդ-
դէմ ելլելով միշտ մէջերնին պատե-
րազմներն անպակաս էին , և շատ ան-
գամ իրարու յաղթելու համար դրսէն
իրենց օգնութեան կը կանչէին օտար

ժողովուրդներ . և ահա այս է պատ-
ճառը Խաղաղուց բազմադարեան ծա-
ռայութեան :

Խաղաղիք 'ի բնէ հանձարեղ են ,
եռանդունք և սիրողք գեղարուեստից .
հիւսիսակողման ժողովուրդները որչափ
որ աշխոյժ ու գործասէր են , այն-
չափ ալ հարաւայինները մեղկ են և
գործատեաց : — Ինդհանուր կրօնքն է
կաթուղիկէ ուղղափառ հաւատքը , և
եկեղեցեացու վանօրէից բազմութեամբ
բը առաջին է համօրէն աշխարհիս մէջ .
'ի վերայ այսր ամենայնի կան ցրիւ աստ-
անդ սփռուած պզտի այլադաւան ժողո-
վուրդներ՝ ինչպէս Վ օտացիք կամ Վ ալ-

դեանք որոնք կալվինական են , ընդ ա-
մէնը 30,000⁶ չափ . կան դարձեալ
30,000 յունադաւան լաւանիացիք որք
Վէպօլսոյ հարաւային ափունքը կը
բնակին : — Խաղաղուց քաղցրահամ-
ք և ճոխ լեզուն կը ծագի 'ի լատինակա-
նէ , զոր աւելի ևս պայծառացուցին մե-
ծանուն և անուանի մատենագիրք՝ հը-
նոց հետ մրցելով , և որոնց անմահական
երկասիրութիւնքը միշտ կենդանի պի-
տի պահեն լեզուն : Եւ այց ռամկին բե-
րանը ըստ գաւառաց գաւառաց կը զս-
նազանի՝ միայն անսայթաք կը համա-
րուի Վոսկանայի լեզուն :

Ընթերցողաց հետաքննութիւնը լեցընելու համար օգտակար կը սեպենք հոս ցուցակ մը
դնելու , իտալական այլ և այլ տէրութեանց երկրին տարածութեանն ու բնակչացը ,
ինչպէս որ էր անցեալ տարուան պատերազմէն առաջ :

Առանձն Տէրութեանց .	Տըրքմէնի-ն Երկրն Վ. □ = լեւոր-հարաւ .	Բն-կէւ .	Մայր-տաւ .	Բն-կէւ Մայր-տաւ .
Նէապօլիս .	1535	6,886,030	Նաբոլի .	413,920
Սիկիլիա .	498	2,231,020	Բալերմոյ .	200,000
Սարտենիա .	1372	5,167,542	Դուրին .	179,635
Վիճալ Եկեղեցւոյ .	1204	3,124,668	Հոսվա .	180,376
Լոմպարտիա .	392	2,866,396	Միլան .	186,685
Վենետիկ .	433	2,306,685	Վենետիկ .	118,120
Դոսկանա .	403	1,806,940	Ֆիորենցա .	114,081
Մոտենա .	110	604,512	Մոտենա .	31,052
Բարմա .	112	499,835	Բարմա .	41,000
Իշխանութիւն Մոնաքոյի .	1	8,300	Մոնաքոյ .	1,315
Հատարակապետութիւն Ս . Մարինոյի .	1 1/4	8,000	Ս . Մարինոյ .	907

Փրանկիսկոս Պաքոն :

Ինչպէս Րոժէր Պաքոն միայնակեա-
լը՝ որ 1250⁶ ժամանակները ծաղկե-
ցաւ և բնական գիտութեանց մէջ մե-
ծապէս յառաջացաւ , անանկ որ իր դա-
րուն մարդիկները բոլոր գերազանցեց ,
ու իբրեւ դիւահայր արհեստի մը ե-
տեւէ եղող հարածուեցաւ ամենէն , ա-
սանկ ալ Փրանկիսկոս Պաքոն կամ Պէ-
քըն , ծնեալ 1560⁶ 'ի Լ անտոն , իր ժա-
մանակի գիտութեանց սահմանն անցնելով
այնպիսի ճշմարտութեանց գուշակ եղաւ ,

որ այսօրուան օրս մեր գիտութեանց սահ-
մանն կամ եզրը կրնայ ըսուիլ : Ի՞նչ
կարողութեան տէր , գործունեայ միտք
ու վառվռուն երեւակայութեամբ ճո-
խացած Պաքոն՝ մանկական հասակէն
սկսաւ կարգէ դուրս սրամտութիւն մը
ցուցընել , որ դուն ուրեք կը պատահի
ան հասակին մէջ , որով ուղիղ դատ-
մամբ ճանչցաւ լաւիստոտեւեան ոճին
սխալները , ծռութիւններն և վտանգ-
ները , որ ան ատեն ամենայն ուսմանց
և գիտութեանց հիմունքն էր : Իրեն
սովորածներուն ճշմարտութեանը վրայ
տարակուսիք , իր հանձարոյն արտա-